ՎՐԱՍՏԱՆ

«ՎՐԱՍՏԱՆ» (ՆԱՀԱՐՈՍՈՒԹՅՈՒՆ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՍ № 55 - 56 (16756) ՇԱԲԱԹ 13 ՀՈՒԼԻՍԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՀԱՄԱԺՈՂՈՎ

«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ» ՎԵՑ ԵՐԿՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹՎՈՒՄ ԷՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐ ԶՈՀՐԱԲ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԸ

Հուլիսի 11-12-ը Բաթումիում անցկացվեց «Վրաստանի եվրոպական ուղին»՝ «Արժանի գործընկերության 10 տարի. անցած ուղի եւ հեռանկարներ» բարձր մակարդակի միազգային համաժողովը՝ նվիրված Արեւելյան գործընկերության 10-ամյակին:

Համաժողովի աշխատանքին մասնակցում էին Եվրոպայի խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը, հումանիտար օգնության եւ հակաճգնաժամային միջոցառումների հարցերով եվրակոմիսար Քրիստոս Ստիլիանիդիսը, Էստոնիայի վարչապետ Յուրի Ռատիսը, Հայաստանի արտաքին գործերի նախարար Զոհ-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԷԻՆ

Հուլիսի 11-ին, Բաթումիում անցկացվող «Վրաստանի եվրոպական ուղի»՝ «Արժանի գործընկերության 10 տարի. անցած ուղի եւ հեռանկարներ» միջազգային համաժողովի շրջանակներում, տեղի ունեցավ Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեի հանդիպումը եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի հետ:

Մամուկա Բախտաձեն հյուրին շնորհակալություն հայտնեց միջազգային համաժողովին մասնակցելու կապակցությամբ եւ կարեւորեց Դոնալդ Տուսկի կողմից համաժողովում արծարծած գաղափարները:

Հանդիպմանը կողմերը խո-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿԿՈՂՄ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հուլիսի 10-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ տարածաշրջանային այցի շրջանակներում Երեւանում գտնվող Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի հետ:

Հայաստան-Եվրամիություն համագործակցության խորացման, երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակի քննարկմանը նվիրված հանդիպման ավարտից հետո, կայացավ Նիկոլ Փաշինյանի եւ Դոնալդ Տուսկի համատեղ մամլո ասուլիսը, որտեղ հանրագումարվեցին կայացած հանդիպման արդյունքները:

- Իմ այցելությունը փաստում է այն կարեւորությունը, որ Եվրամիությունը վերագրում է Հայաստանի եւ տարածաշրջանի հետ մեր հարաբերություններին:

Այսօրվա քննարկումներն ընդգծեցին մեր գործընկերության Համաձայնագրի արդյունավետ իրականացման անհրաժեշտությունը: Սա հավակնոտ համաձայնագիր է, որը սատարում է Հայաստանի արդիականացմանը: Եվրոպական միությունը կշարունակի տրամադրել տեխնիկական եւ ֆինանսական օժանդակություն՝ այս Համաձայնագրի իրականացման ուղղությամբ,- ասաց Դոնալդ Տուսկը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՆԵՐԻ 23-ՐԴ ՕՐ. ՉՈՐՍ ՀԱՆՐԱՀԱՎԱՔ ՄԵԿ ՕՐՈՒՄ՝ ՏԱՐԲԵՐ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ

Թբիլիսիի կենտրոնում, Ռուսթավելու պողոտայի վրա, արդեն 23-րդ օրն է, ինչ շարունակվում են հունիսի 20-ին խորհրդարանի նիստերի դահլիճում Ուղղափառության միջխորհրդարանական ասամբլեայի 26-րդ նիստի բացմանը խորհրդարանի նախագահի բազկաթոռին ռուսական Դումայի կոմունիստ պատգամավոր Սերգեյ Գավրիլովի բազմեցման պատճառով սկսված բողոքի ակցիաները:

Անցած ժամանակահատվածում իշխանությունը բավարարեց բողոքավորների երեք պահանջներից երկուսը՝ պաշտոնաթող եղավ խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն (պատգամավորական մանդատը վայր դրեց նաեւ Ուղղափառության միջխորհրդարանական ասամբլեայում Վրաստանի ներկայացուցիչ Զաքարիա Քուցնաշ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳԸ՝ ՀՈՒԼԻՍԻ 14-ԻՆ



Հուլիսի 14-ին Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում կիրակնօրյա Սուրբ պատարագ կմատուցի Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը: Հավարտ Սուրբ պատարագի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը թբիլիսահայ հավատացյալներին կներկայացնի Վիրահայոց թեմի նորանշանակ առաջնորդական տեղապահ Կիրակոս վարդապետ Դավթյանին:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԷԼ ԿԱ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԷԼ

ԵԹԵ ԱՆԳԱՄ ՕՐԵՆՔԸ ՉԻ ՊԱՏԺՈՒՄ, «ԼԵԶՈՒՆ ՊԵՏՔ Է ԿԱՊ ՈՒՆԵՆԱ, ԻՍԿ ԱԽՈՐԺԱԿԸ՝ ՉԱՓ»

Այն, ինչ տեղի ունեցավ հուլիսի 7-ի երեկոյան «Ռուսթավի 2» հեռուստաընկերության «P.S.Պոստսկրիպտում» հաղորդմանը, կարելի է գնահատել որպես լրագրողական էթիկայի բացակայության, անպատասխանատվության, որոշակիորեն նաեւ լկտիության օրինակ, ինչը լրիվությամբ բնութագրվում է ժողովրդական «Լեզուն ոսկոր չունի» ասացվածքով:

Խոսքը վերաբերում է «P.S.Պոստսկրիպտում» հաղորդաշարի հեղինակ Գիորգի Գաբունիային, ով հաղորդման մեկնարկին, առանց որեւէ նախաբանի, ռուսերենով «ուղերձ» հղեց Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինին՝ իր խոսքերը համեմելով փողոցային հայհոյանքներով, լկտի արտահայտություններով, որոնք անհամատեղելի են քաղաքակիրթ մարդ հասկացողության հետ: Անկախ հայհոյանքների հասցեագրման օբյեկտի, հանգուցյալների շիրիմների անպատվության, համաձայնեք, ամենաանմարդկայինն է, ինչը հնարավոր է պատկերացնել:

ՕՐԵՆՔԸ ՊԱՏԻԺ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ

Վրաստանում գործող օրենսդրությունը, ի տարբերություն եվրոպական եւ ամերիկյան երկրների, որտեղ անձնականին վերաբերող թեկուզ թյուր տեղեկատվության համար (էլ չենք խոսում բացահայտ հայհոյանքի մասին), մարդկանց դատում են՝ սահմանելով պատկառելի պատժաժամկետներ, չի նախատեսում հեռուստաեթերով, ռադիոյով, մամուլի էջերում անձնական վիրավորանքների, հայհոյանքների եւ այլնի համար պատասխանատվության ենթարկելը: Հավանաբար, այդ հանգամանքն

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՎՐԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ

Հուլիսի 10-ին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը Մցխեթայի Ջվարիի պատրիարքական նստավայրում ընդունեց Վիրահայոց թեմում իր առաքելությունն ավարտած Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին:

Հրաժեշտի հանդիպմանը Նորին Սրբությունը հաջողություն մաղթեց Վիրահայոց թեմում իր առաքելությունը ավարտած Վազգեն եպիսկոպոս Միզախանյանին՝ Սուրբ Էջմիածնում նրա առաջիկա գործունեությունում: Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքն ընդգծեց վրաց եւ հայ եկեղեցիների հազարամյակների բարեկամության կարեւորությունը:

Նախօրեին՝ հուլիսի 8-ին, Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում Վազգեն եպիսկոպոս Միզախանյանը հանդիպեց երկրում գործող կրոնական համայնքների առաջնորդներին, Վրաստանի Կրոնի հարցերով պետական գործակալության ներկայացուցիչներին ու հասարակական կազմակերպությունների գործիչներին:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հուլիսի 11-ին Վրաստանի եւ Հայաստանի Հանրային հեռուստաընկերությունները ստորագրեցին համագործակցության հուշագիր:

Հեռուստաընկերությունները պայմանավորվածություն են ձեռք բերել աշխատել մեդիա նախագծերի, հաղորդումների համատեղ արտադրության, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, լրատվական նյութերի արխիվացման եւ տեղեկատվական գործիքների կիրառման ուղղություններով: Կողմերը պայմանավորվեցին նաեւ կազմակերպել սեմինարներ, մասնագետների փոխայցելություններ, վերապատրաստումներ եւ ակտիվացնել լրատվական նյութերի փոխանակությունը:

Հուշագրի ստորագրումից հետո, Վրաստանի Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրեն Վասիլ Մաղլափերիձեն նշեց.

- Մենք շատ ուրախ ենք այս հուշագիրը ստորագրելու կապակցությամբ: Մեր սերտ համագործակցությունը կբարելավի լրագրությունը, որը մենք ստեղծում ենք, հասարակությունը, որը մենք ձեւավորում ենք եւ մարտահրավերները, որոնց հետ մենք առերեսվում ենք:

Իր հերթին, Հայաստանի Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրեն Մարգարիտա Գրիգորյանն ասաց.

- Հուշագիրը կնպաստի տեղեկատվության արագ փոխանակմանը՝ հնարավորություն ընձեռելով հեռուստադիտողներին ծանոթանալ հարեւան երկրում տեղի ունեցող իրադարձություններին: Երկու երկրներն էլ հարուստ արխիվ ունեն, որից օգտվելը նոր նախագծեր ստեղծելու լայն հնարավորություն կտա:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՆԵՐԻ 23-ՐԴ ՕՐ. ՉՈՐՍ ՀԱՆՐԱՀԱՎԱՔ ՄԵԿ ՕՐՈՒՄ՝ ՏԱՐԲԵՐ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վիլին), եւ 2020 թվականի (նախօրոք ծրագրված 2024-ի փոխարեն) խորհրդարանական ընտրությունները կանցկացվեն միայն համամասնական ընտրակարգով, զրոյական արգելանհիշով: Ինչ վերաբերում է երրորդ պահանջին, այն է՝ հունիսի 20-ի երեկոյան մարմնական վնասվածքներով ու ձերբակալություններով հագեցված ցուցարարների եւ իրավապահների ընդհարման գլխավոր պատասխանատու, ներքին գործերի նախարար Գիորգի Գախարիայի պաշտոնաթողությանը: Նշենք, որ հունիսի 20-ին տեղի ունեցած իրադարձությունները Վրաստանի դատախազությունը պաշտոնապես գնահատվել է որպես պետական հեղաշրջման փորձ, ինչը նախատեսում է գործի հետաքննության եւ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու հավանականություն: Սակայն այն, ինչ տեղի ունեցավ անցած երկուշաբթի օրը՝ հուլիսի 8-ին Ռուսթավելու պողոտայում, անանախադեպ էր. միաժամանակ, մայրաքաղաքում անցկացվեցին արմատականորեն տարբեր պահանջներով երեք հանրահավաքներ: Խորհրդարանի աստիճաններին Գիորգի Գախարիայի հրաժարականի պահանջով հավաքվածների մոտ հայտնվեցին Լեւան Վասաձեի նախաձեռնած եւ Վրաց Ուղղափառ հոգեւորականների կողմից աջակցված հակախտրական օրենքի վերանայման պահանջ ներկայացնող «Ավանդույթների համար պայքարողները» եւ, ամենազարմանալին, սեռական փոքրամասնությունների՝ ԼԳԲՏ ակտիվիստների պաշտպանության ակցիայի մասնակիցները՝ «Ոչ հոմոֆոբիային», «Պետությո՛ւն, ո՞ւր ես» կարգախոսներով: Ավելացնենք, որ սկսած կիրակի օրվա՝ հուլիսի 7-ի գիշերվանից, Թբիլիսիում եւս մեկ ակցիա է անցկացվում: «Ռուսթավի 2» հեռուստաընկերության կենտրոնակայանում հավաքվածները բողոքարկում են ընկերության «Պոստսկրիպտում» հաղորդաշարի հեղինակ Գիորգի Գաբունիայի՝ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին ռուսերենով հասցեագրված հայհոյախառն ուղերձը: (Այդ մասին նյութը ներկայացվում է ստորեւ):

Հատկանշական է, որ վերջին երկու ակցիաների մասնակիցներին, կարծես նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, հաջողվեց խորհրդարանի առջեւից դուրս մղել արդեն երրորդ շաբաթը բողոքարկող ցուցարարներին, զբաղեցնել նրանց տեղը:

Ինչեւիցե, երեք հանրահավաքների ներկայացրած պահանջների անհամատեղությունը եւ արմատական տարբերությունը կարող էր դառնալ անկանխատեսելի հետեւանքներով հղի ընդհարման պատճառ: Բարեբախտաբար, իշխանությունները, հաշվի առնելով նման զարգացումները, նախօրոք պողոտայի լայնքով կանգնեցրին ավտոբուսներ, դրանով իսկ կանխեցին միմյանց հակադրված հոսքերի շփման հավանականությունը:

Անկեղծ ասած, տեղի ունեցածի հակատրամաբանականությունն այնքան ակնհայտ էր, որ ինքնին ծագում էր այդ ակցիաների կազմակերպիչների մշակած ռազմավարության առավել հեռու գնացող նպատակների հարցը: Տեղի ունեցածը դյուրությամբ կարելի էր համեմատել նույն Ռուսթավելու պողոտայում 1991 թվականի դեկտեմբերի վերջին տեղի ունեցած միջադեպի հետ, երբ միմյանց հետ ընդհարվեցին Զվիադ Գամսախուրդիայի եւ Կիտովանի-Իոսելիանի-Սիգուա եռյակի կողմնակիցները, ինչը վերջին հաշվով հանգեցրեց քաղաքացիական պատերազմի, երկրի առաջին նախագահի արտաքսման, տարածքային ամբողջականության խախտման, տնտեսական եւ սոցիալական մակարդակի անկման եւ այլ ողբերգությունների:

Անցած երկուշաբթի օրը իշխանությանը հաջողվեց կանխել դեպքերի ոչ ցանկալի զարգացումը: Այսօրվա դրությամբ, Ռուսթավելու պողոտայում, խորհրդարանի շենքի մոտ, ամեն երեկո մի քանի տասնյակ մարդկանց մասնակցությամբ, ՆԳ նախարարի պաշտոնաթողության պահանջով ցույցը շարունակվում է, թեպետ հանրահավաքին քաղաքական կոչերի փոխարեն, գործիքային համույթների եւ առանձին մեներգիչների կատարմամբ հնչում են երգեր:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ



ՀՈՒՆԱՍՏԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԵՑԻՆ ԱՋ ԿԵՆՏՐՈՆԱՄԵՏՆԵՐԸ

Հուլիսի 7-ին Հունաստանում անցկացված վաղաժամկետ խորհրդարանական ընտրություններում հաղթեց «Նոր դեմոկրատիա» (ՆԴ) առաջատար ընդդիմադիր աջ կենտրոնամետ կուսակցությունը՝ Կիրիակոս Միցոտակիսի գլխավորությամբ: Այն ստացավ քվեների 39,83 տոկոսը: ՆԴ-ն կունենա 158 տեղ՝ երկրի 300-տեղանոց միապալատ խորհրդարանում, ինչը նրան թույլ կտա ինքնուրույն կազմել կառավարություն:

Վարչապետ Ալեքսիս Ցիպրասի արմատական ձախ ուժերի կոալիցիան (ՍԻՌԻԶԱ) ստացել է քվեների 31,55 տոկոսը (86 տեղ): Խորհրդարանում տեղ կգբաղեցնեն նաեւ «Փոփոխությունների շարժում» (ԿԻՆԱԼ) ձախ կենտրոնամետ կուսակցական միավորումը (22 տեղ), Հունաստանի կոմկուսը (15 տեղ), ծայրահեղ աջ «Էլինիկի լիսի»-ն («Հունական որոշում») (10 տեղ), ՄԵՌԱ 25 ձախ շարժումը (9 տեղ):

ԱՄՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՇՔԵՐԹ՝ 27-ԱՄՅԱ ԸՆԴՄԻՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Հուլիսի 4-ին Ամերիկայի Միացյալ Նահանգները Անկախության օրը տոնել է ռազմական շքերթով եւ տոնական միջոցառումներով: Վերջին 27 տարիների ընթացքում դա առաջին զինվորական շքերթն էր: Սակայն, միջոցառումներին ռազմական տեխնիկայի ներգրավման պատճառով, Սպիտակ տան լիդերին մեղադրել են ազգային տոնը քաղաքականացնելու մեջ:

7,1 ԲԱԼԱՆՈՑ ԵՐԿՐԱՇԱՐԺ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅՈՒՄ

ԱՄՆ օդերեւութաբանական կենտրոնի տեղեկատվությամբ, Հարավային Կալիֆորնիայի շրջանում 7,1 մագնիտուդ ուժգնությամբ ցնցումները գրանցվել են անապատի շրջանում: Էպիկենտրոնը եղել է Ռիջքրեսթ քաղաքի մերձակայքում, Լոս Անջելես քաղաքից 240 կմ հեռավորության վրա:

Ուժգին երկրաշարժից հետո, տարածաշրջանում առանձին բնակավայրերին էլեկտրաէներգիա չի մատակարարվում:

Ստորգետնյա ցնցումները զգացել են Լաս-Վեգասում եւ Մեքսիկայում:

Կալիֆորնիայի նույն շրջանում ուժգին երկրաշարժ էր տեղի ունեցել նաեւ հուլիսի 5-ին:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԷԼ ԿԱ, ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ԷԼ

ԵԹԵ ԱՆԳԱՄ ՕՐԵՆՔԸ ՉԻ ՊԱՏԺՈՒՄ, «ԼԵԶՈՒՆ ՊԵՏՔ Է ԿԱՊ ՈՒՆԵՆԱ, ԻՍԿ ԱԽՈՐԺԱԿԸ՝ ՉԱՓ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

էլ շահարկվեց «Ռուսթավի 2» հեռուստաընկերության ղեկավարության կողմից, որն հանձինս այսպես կոչված լրագրող Գիորգի Գաբունիայի, որոշեց «իր լուման ներդնել» վրաց-ռուսական առանց այդ էլ հունիսի 20-ի իրադարձություններից հետո սրված հարաբերությունների ծայրաստիճան լարված գործում: Օրենքը՝ օրենք, սակայն ո՞ւր մնաց մարդկայությունը, լրագրողի էթիկան, հարգանքը հեռուստադիտողի, ռադիոունկնդրի, թերթի ընթերցողի նկատմամբ... Սույն ենթատեքստում ուղղակի զարմանք է պատճառում հեռուստաընկերության գլխավոր տնօրեն Նիկա Գվարամիայի հայտարարությունը, ըստ որի, «Հեռուստատեսությունը կտրականապես չի կիսում ոչ միայն Գաբունիայի կարծիքը, այլեւ նրա արտահայտչաձեւը: Համապատասխանաբար, մենք կքննարկենք այդ հարցը եւ անպայման որոշում կկայացնենք հեղինակի վերաբերյալ»: Եվ որոշում ընդունվեց՝ Գիորգի Գաբունիան երկու ամսով զրկվել է եթերում հաղորդում վարելու իրավունքից:

ՁՁՎԵԼԻ, ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԱՐՔ

- Այն, ինչ տեսանք, սահմռկեցուցիչ, անբարոյական արարք է, միաժամանակ՝ նպատակամղված եւ կեղտոտ սադրանք,- գնահատելով «Ռուսթավի 2» հեռուստաընկերության եթերով արձակված հաղորդումը՝ հայտարարեց Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն: Նրա համոզմամբ, դա մեծ վտանգ պարունակող ուղերձ է, որն ուղղված է Վրաստանի խաղաղության եւ անվտանգության դեմ:

- Այդ կտրականապես անընդունելի արտահայտություններն առանձին վերցրած որեւէ լրագրողի խոսքեր չեն: Դա «Ազգային շարժման» եւ նրա խամաճիկների կողմից տարիներ շարունակվող ագրեսիան է վրաց ժողովրդի նկատմամբ: Դրա նպատակը Վրաստանի ապակայունացումն է, մեր ազգային շահերի վնասումը: Ցանկանում եմ հավաստիացնել, որ մենք ոչ մեկին չենք ների, նման սցենարներ Վրաստանում չեն անցնի, մենք դա թույլ չենք տա,- հայտարարեց Մամուկա Բախտաձեն:

Վերոնշյալ «ուղերձի» դատապարտմամբ հանդես եկան նաեւ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն, Վրաստանում գործող գրեթե բոլոր քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

ՀԱՆՐԱՀԱՎԱՔԸ ՊԱՀԱՆՋԵՑ ՓԱԿԵԼ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Հուլիսի 7-ին, վերոնշյալ հաղորդման ժամանակ, «Ռուսթավի 2» հեռուստաընկերության կենտրոնակայանի տարածքում հանպատրաստից անցկացված հանրահավաքին, մասնակիցները բարձրացրին երեք պահանջ՝ պարզելու, թե «ո՞վ է կանգնած հեղաշրջման փորձի հետեւում», արգելել հեռուստաալիքի հեռարձակումը եւ աշխատանքից ազատել հեռուստաալիքի ղեկավար Նիկա Գվարամիային ու «Պոստսկրիպտումի» հաղորդավար Գիորգի Գաբունիային:

ԱՐՁԱԳԱՆՔ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ՝ ՊՈՒՏԻՆԸ ԴԵՄ ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ ՆՈՐ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ

Վերոնշյալի կապակցությամբ, Ռուսաստանի ԱԳՆ-ն տարածեց հայտարարություն, ըստ որի, տեղի ունեցածը համարում են վրացական արմատական ուժերի եւս մեկ սադրանք՝ ուղղված ռուս-վրացական հարաբերությունների խզմանը:

Հուլիսի 8-ին Ռուսաստանի Պետական դուման որոշում ընդունեց Վրաստանի դեմ արդեն սահմանված պատժամիջոցներին զուգընթաց նոր պատժամիջոցներ սահմանելու մասին, թեպետ նույն օրը ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը արտահայտվեց նոր պատժամիջոցների կիրարկման դեմ: Իր խոսքում, որոշակիորեն խեղաթյուրելով պատմության էջերը (ըստ երեւույթին, հաշվի չի առել այն հանգամանքը, որ Վրաստանի պատմությունը չի սկսվել 17-րդ,18-րդ կամ 19-րդ, առավել եւս 20-րդ դարից), հայտարարեց, որ «ի նշան վրաց ժողովրդի նկատմամբ հարգանքի» նպատակահարմար չի գտնում պատժամիջոցների կիրարկումը:

Հիշեցնենք, որ հուլիսի 8-ից ուժի մեջ է մտել հենց Վլադիմիր Պուտինի հրամանագիրը, ըստ որի, դադարում են Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ բոլոր ավիափոխադրումները:

ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՄԱԺՈՂՈՎ

«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ» ՎԵՑ ԵՐԿՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րաբ Մնացականյանը, Լեհաստանի, Շվեդիայի, Բուլղարիայի, Ուկրաինայի, Սերբիայի, Սլովակիայի, Չեխիայի, Գերմանիայի, եվրոպական այլ երկրների բարձր պաշտոնյաներ:

Համաժողովը բացեց Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն: Համաժողովի մասնակիցներին ողջունեցին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, ԱԳ նախարար Դավիթ Զալկալիանին, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն: Եվրամիության կողմից նախաձեռնած «Արեւելյան գործընկերության» նախագծի նշանակության մասին խոսեց Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը:

- «Արեւելյան գործընկերությունը» հայտնվել է մարտահրավերի առջեւ, սակայն տասնամյակի ընթացքում «Արեւելյան գործընկերությունն» ունեցել է նաեւ լուրջ հաջողության պատմություն,- իր խոսքում նշեց Վրաստանի վարչապետն ու հավելեց.

- Գործընկերություն բտեղծելու մասին պատմական որոշումը խթան հանդիսացավ մոդեռնիզացիայի եւ 6 գործընկեր երկրի ներգրավվածության համար:

Համաժողովի երկօրյա աշխատանքի ընթացքում, մասնակիցների կողմից ստորագրվեցին մի շարք համաձայնագրեր:

ԴՈՆԱԼԴ ՏՈՒՍԿ. «ԴՈՒՔ ԶԱՐՄԱՑՐԻՔ ԵՎՐՈՊԱՅԻՆ ԵՎ ՈՂՋ ԱՇԽԱՐՀԻՆ»

Եվրախորհրդի նախագահ Դոնալ Տուսկը, հանդես գալով Բաթումիում անցկացված «Վրաստանի եվրոպական ուղին» միջազգային համաժողովին, իր խոսքում մեջբերելով Վաժա Փշավելայի ասույթներից, դիմելով հավաքվածներին, վրացերենով ասաց.

-Դիմում եմ ձեզ, որեւէ մեկին թույլ չտաք ձեզ բաժանել, միշտ միասնական եղեք:

Եվրոպական խորհրդի նախագահի խոսքով, Վրաստանն արել է անհնարինը եւ միավորվել մեկ նպատակի շուրջ:

- Որպես Եվրախորհրդի նախագահ եւ որպես լեհ՝ ի սրտե ցանկանում եմ ասել՝ ինձ համար Վրաստանը ոչ միայն կարեւոր գործընկեր է Եվրամիության համար, այլ երբ ասում եմ «Վրաստան», նկատի ունեմ «ազատություն», երբ ասում եմ «Վրաստան», նկատի ունեմ հպարտություն, երբ ասում եմ «Վրաստան», նկատի ունեմ «քաջություն»: Դուք փոքր երկիր եք, սակայն՝ մեծագույն ազգ: Դուք անհնարինն եք արել, չնայած տարբերություններին, մեկ նպատակի շուրջ եք հավաքվել՝ կառուցելով անկախ երկիր: Դուք զարմացրել եք Եվրոպային եւ ամբողջ աշխարհին: Որեւէ մեկին թույլ չտաք ձեզ բաժանել, միշտ միասին եղեք՝ որպես մեկ մեծ Եվրոպա,- հայտարարեց Տուսկը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



սեցին անցած տաս տարիների ընթացքում «Արեւելյան գործընկերության» շրջանակներում իրականացված աշխատանքները, նշեցին, որ այդ առումով Վրաստանը առանձնակի առաջընթաց է ապրել: Վրաստանի վարչապետի հավաստմամբ, Վրաստանի եվրոպական ուղին ոչ միայն քաղաքական որոշում է, այլեւ երկրի բնակչության քաղաքակիրթ ընտրությունը: Եվրախորհրդի նախագահը կրկին ընդգծեց Վրաստանի տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության հարցում Եվրոպական միության հստակ դիրքորոշումը:

Հանդիպմանը կողմերը անդրադարձ կատարեցին Վրաստանի բռնազավթված տարածքներում ստեղծված հումանիտար ծանր իրավիճակի, Վրաստանի կառավարության «Քայլ՝ լավագույն ապագայի ուղղությամբ» խաղաղասիրական նախաձեռնություններին:

Հուլիսի 11-ին կայացավ նաեւ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու եւ Դոնալդ Տուսկի հանդիպումը, որի ընթացքում, Եվրախորհրդի նախագահը հայտարարեց, որ Վրաստանը շատ կարեւոր գործընկեր է Եվրամիության համար:

«Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կենտրոնակայանում կառավարող կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլին, հանդիպելով Եվրախոհրդի նախագահ Դոնալդ Տուսկի հետ, հայտարարեց, որ երկար ժամանակ է, ինչ նման թանկագին հյուր Վրաստանում չի եղել: Հանդիպմանը կողմերը խոսեցին Վրաստանի եվրահնտեգրման հնարավորությունների եւ հեռանկարների մասին: Բիձինա Իվանիշվիլու հավաստմամբ, մեր ուղին եվրատլանտյան տարածքն է, մեր ուղին Եվրոպան է:



ՎԵՑ ԱՄՍՈՒՄ՝ ՄԵԿՈՒԿԵՍ ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐԻ ԵԿԱՄՈՒՏ

Վրաստանի զբոսաշրջության ազգային վարչության տեղեկատվությամբ, ընթացիկ տարվա 6 ամսվա նախնական տվյալների համաձայն, միջազգային ճանապարհորդներից Վրաստանի ստացված եկամուտը կազմում է 1,5 մլրդ ԱՄՆ դոլար: Այդ ցուցանիշը 95,4 մլն-ով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Աճը կազմում է 7 տոկոս:

Հունիսին միջազգային ճանապարհորդներից ստացված եկամուտը կազմել է 340 մլն ԱՄՆ դոլար, ինչը 14,6 մլն-ով գերազանցում է 2018 թվականի հունիսի ցուցանիշը: Աճը կազմում է 4,5 տոկոս:

ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հուլիսի 10-ից Վրաստանի ազգային քննություններին միացան գործող ուսուցիչներն ու ուսուցիչ դառնալու ցանկություն ունեցողները: Առաջին քննությունը մասնագիտական ունակություններից է:

Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Սոփիո Գորգոձեի խոսքով՝, ուսուցիչների քննությունների արդյունքները, հավանաբար, հայտնի կդառնան օգոստոսի վերջին, սեպտեմբերի սկզբին:

Նրա խոսքով, 10 հազարից ավելի դիմորդ է գրանցվել, որոնք ուսուցիչներ չեն եւ ուզում են սկսել ուսուցչական կարիերա, իսկ ընդհանուր առմամբ գրանցվածների քանակը 31 500 է: Գորգոձեն հավելել է նաեւ, որ այս տարվա թեստերում նշանակալի փոփոխություններ չկան, հեշտացված չէ եւ մոտավորապես նույնն է, ինչ անցած տարի էր:

Ուսուցիչների առարկայական քննությունները կավարտվեն հուլիսի 21-ին:

ՇՁԻՄՈՆԱՎԼԵՇԻՆ ՍԱՄՍԱԽՈՒՐ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ 552 ԴԵՊՔ

Հուլիսի 1-7-ը ներառյալ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի կողմից երկրի ողջ տարածքով անցկացված ստուգիչ միջոցառումների արդյունքում, բացահայտվել է հարկային օրենսդրության խախտման 552 դեպք:

Մասնավորապես, ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի աշխատակիցներն ստուգել են 4021 հարկատուի: Ստուգման արդյունքում, բացահայտվել են հարկային օրենսդրության հետեւյալ խախտումները. առանց ապրանքագրերի ապրանքների փոխադրման 128 փաստ, տնտեսական գործունեության իրականացման համար հարկատուի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգի 15 դեպք, կանխիկ գումարներով առքուվաճառքի ժամանակ գանձարկղային սարքի անտեսման 409 փաստ:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ ԵՆ ԱՌԱՆՑ ԱՔՑԻԶԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՓԱՍՏԵՐ

Հուլիսի 8-10-ը Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի աշխատակիցները, առանց ապրանքագրերի ապրանքների փոխադրումների բացահայտման նպատակով, անցկացրին միջոցառումներ: Վերահսկիչ միջոցառումների արդյունքում հայտնաբերվել են առանց ապրանքագրերի ապրանքների փոխադրման չորս փաստ: Մասնավորապես, կանխվել է մասնավոր քաղաքացիների կողմից առանց աքցիզի 40780 գլանակ փոխադրելու փորձը:

Վրաստանի հարկային օրենսգրքի համաձայն, օրինախախտում թույլ տված քաղաքացիների համար սահմանվել են պատժամիջոցներ, անաքցիզ ապրանքը բռնագրավվել է:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՅԱՆՈՒՄ

Հուլիսի 11-ին Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության պետ Վախթանգ Լաշքարաձեն հանդիպում ունեցավ միջազգային տրանսպորտային միության (IRU) գործադիր տնօրեն Բորիս Բլանշի հետ:

Հանդիպմանը կողմերը խոսեցին տարբեր երկրների միջեւ տրանսպորտային նախագծերի հաջող իրականացման մասին եւ քննարկեցին երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր: Միաժամանակ, հանդիպմանը ուշադրություն բեւեռեցին 2017 թվականին Թբիլիսիում անցկացված համաշխարհային մաքսային կազմակերպության տեղեկատվական տեխնոլոգիաների 16-րդ համաժողովի շրջանակներում ֆինանսների նախարարության Եկամուտների ծառայության եւ IRU միջեւ տեղեկատվության փոխանակման վերաբերյալ ձեւակերպված հուշագրի իրականացման հնարավորության վրա:

Հանդիպանը ներկա էին Եկամուտների ծառայության հարկային դեպարտամենտի պետ Մամուկա Ջանգուլաշվիլին եւ տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ղեկավար Նոդար Կակրիաշվիլին:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ՀԵՏ

ԶԱՐԵՀ ՍԻՆԱՆՅԱՆ. «ՀԱՅՐՍ ԾՆՎԵԼ Է ՊՈԼՍՈՒՄ, ԵՍ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ, ԵՐԵԽԱՆԵՐՍ՝ ԼՈՍ ԱՆՁԵԼԵՍՈՒՄ...»

«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթը զրուցել է Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանի հետ, որը ձեր ուշադրությանն ենք ներկայացնում որոշ կրճատումներով:

- Պարոն Սինանյան, շնորհավորում ենք Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար նշանակվելու առիթով: Նորաստեղծ այս ինստիտուտն առաջին քայլերն է անելու Ձեր գլխավորությամբ: Ո՞րն է Հայաստան-Սփյուռք հարաբերությունների արդյունավետ զարգացումն ապահովելու Ձեր տեսլականը:

- Շնորհակալ եմ շնորհավորանքի եւ հարցազրույցի հրավերի համար: Հարցը բավականին ընդգրկուն պատասխան է ենթադրում: Իհարկե, այսօր մենք եզակի պատմական հնարավորություն ունենք արդյունավետորեն զարգացնելու Հայաստան-Սփյուռք հարաբերությունները եւ այդ հարաբերություններում ապահովել փոխադարձ վստահություն: Ո՞րն է առաջին քայլն այս ճանապարհին: Նախեւառաջ, մենք պետք է խորապես ճանաչենք Հայկական սփյուռքն իր բազմազանության, աշխարհագրական հսկայական տարածվածության ու ներուժի առումով, այսինքն, ինչպես հակված եմ հաճախ ասել, մենք պիտի վերլուծենք, ուսումնասիրենք, հասկանանք Հայկական սփյուռքը: Մի կողմում մենք ենք՝ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը, մյուս կողմից՝ հսկայական սփյուռքն է, որին մենք լավ չենք ճանաչում: Պայմանավորված իրենց ծագումնաբանությամբ ու անցյալով, գտնվելով տարբեր քաղաքական համակարգերում, քաղաքակրթական միջավայրերում, ունենալով սերնդային, ինտեգրման, ձուլման, Հայաստանի կյանքին ներգրավվածության տարբեր աստիճաններ՝ այդ սփյուռքի հատվածները էականորեն տարբերվում են իրարից նույնիսկ նույն պետության սահմաններում: Մեր առաջին աշխատանքները պետք է ուղղված լինեն հայկական բազմերանգ սփյուռքի ուսումնասիրմանը, եւ պատահական չէ, որ ես աշխատանքային առաջին քայլերս սկսելու եմ հայկական ամենաբարդ, ամենամեծ Սփյուռքի՝ Ռուսաստանի Հայկական սփյուռքի հետ սերտ համագործակցության մեկնարկով:

Հաջորդ քայլը միանշանակ Հայաստան-Սփյուռք քաղաքականության մշակումն է՝ հաշվի առնելով հայկական համայնքների առանձնահատկություններն ու խնդիրները: Եվ մեր տեսլականի կարեւոր մասն ու գերխնդիրն է նաեւ նպաստել Հայկական սփյուռքի ուժացման եւ ձուլման գործընթացների դանդաղեցմանը, հայ ինքնության պահպանմանը, Հայաստանի կյանքին Սփյուռքի ներգրավվածության ապահովմանը: Այս իմաստով, մենք կարիք ունենք բացահայտելու Սփյուռքի հսկայածավալ ներուժն իր մասնագիտական, ֆինանսական, տնտեսական, գիտական ենթաշերտերով: Նրանք մեզ համար նաեւ պոտենցիալ հայրենադարձներ են, եւ մենք պիտի այնպիսի պետություն ստեղծենք, որ, որքան հնարավոր է, շատ մարդ հարենադարձվի: Հայաստանն այլեւս անարդարության եւ անօրինականության երկիր չէ, յուրաքանչյուր հայի համար այն պետք է լինի ապրելու ու ապրողների երկիր, Հայաստանը նրանց հայրենիքը պիտի դառնա գործնականորեն: Մեր տեսլականում այս գիծը եւս հստակորեն առկա է:

- Բավարա՞ր են գլխավոր հանձնակատարի եւ նրա գրասենյակի լիազորությունները սահմանված գործառույթներն իրականացնելու համար: Արդյոք, դրանք բավարա՞ր են նախկին սփյուռքի նախարարության գործունեությունն ամբողջ ծավալով փոխարինելու եւ այն ավելի արդյունավետ դարձնելու համար:

- Այո՛, այդ լիազորությունները միանշանակ բավարար են: Վարչապետի աշխատակազմում անմիջապես երկրի ղեկավարի ենթակայության տակ ստեղծելով Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը այսպիսով մեկ անգամ եւս ընդգծեց Հայաստան պետության համար Սփյուռքի հետ հարաբերությունների կարեւորությունը: Նախարարության գործունեության անարդյունավետությունը պայմանավորված է եղել, նախեւառաջ, պետության կողմից տարվող քաղաքականությամբ, երբ շահագրգռվածություն չի եղել հայաստանյան կյանքում սփյուռքի պրակտիկ ներգրավվածության առումով, եւ հիմնականում պահպանվել է միայն ձեւական բաղադրիչը: Հիմա ճիշտ հակառակն է, այսօր պետությունը նախաձեռնողականություն է ցուցաբերում, որպեսզի Սփյուռքը ներկա լինի հայաստանյան կյանքի բոլոր բնագավառներում: Հայաստան-Սփյուռք հարաբերություններում եղել է անկեղծության ու վստահության պակաս, եւ այսօր մեր նպատակն է փոխել այս հարաբերությունների տրամաբանությունը: Սրան մեծապես կնպաստի նաեւ այն հանգամանքը, որ հանձնակատարն այլեւս սահմանափակված չէ նախարարական պարտականություններով, ունի ավելի լայն լիազորություններ, վարչապետի ներկայացուցիչն է Սփյուռքում եւ կարող է երկար ժամանակ գտնվել համայնքներում, ծանոթանալ բոլոր շերտերի հետ, լսել, վերլուծել եւ համախմբել առաջարկները, մտահոգությունները, խնդիրները:

- Ծնված լինելով Հայաստանում՝ երկար տարիներ ապրել եք Միացյալ Նահանգներում եւ լավ եք պատկերացնում Սփյուռքի եւ սփյուռքահայության խնդիրները: Որո՞նք են հրատապ եւ համակարգային լուծումներ պահանջող մարտահրավերները:

- Այո՛, երկար տարիներ ապրել եմ Հարավային Կալիֆոռնիայի հայկական համայնքում, որը շատ յուրահատուկ է իր տեսակով, որովհետեւ այնտեղ են բնակվում աշխարհի շատ երկրներից եկած հայեր՝ իրանահայեր, լիբանանահայեր, արգենտինահայեր, Ռուսաստանի հայեր, Հայաստանից եկած հայեր: Եզակի միկրոսփյուռք է, որտեղ մեր Սփյուռքի շատ ներկայացուցիչներ կան, եւ այդ իմաստով Սփյուռքի տարբեր շերտերի մարտահրավերներին քաջատեղյակ եմ: Արդեն իսկ առաջին հարցի պատասխանում, երբ խոսում էի մեր տեսլականի եւ դրա կյանքի կոչման առաջնահերթությունների մասին, որոշ չափով նկարագրեցի նաեւ Սփյուռքի մարտահրավերները: Ձուլվելու տեմպերի դանդաղեցում, հայապահպանություն, Հայաստանի կյանքին ներգրավվածություն, հայրենիքը՝ որպես ապրելու, աշխատելու եւ կրթվելու վայր տեսնելու անհրաժեշտություն, հայրենադարձության գործընթացում արհեստական խոչընդոտների վերացում, արագ ինտեգրման խթանում եւ այլն: Այս խնդիրների մի մասը բնականաբար համակարգային լուծում է պահանջում, ինչպես օրինակ՝ հայրենադարձության գործընթացի դյուրացումն է, որտեղ պետք է գործուն աջակցություն ցուցաբերի նաեւ պետությունն իր ենթակառուցվածքներով, օրենսդրական դաշտի բարեփոխումներով, բիզնես-միջավայրի շարունակական առողջացմամբ եւ այլն: Սակայն, նախեւառաջ պետք է երկխոսել Սփյուռքի հետ, եւ այստեղ կարեւոր է համապատասխան հարթակների ստեղծումը, որտեղ ոչ միայն Սփյուռքը կկարողանա շփվել Հայաստանի հետ, այլեւ Սփյուռք-Սփյուռք կապերը կամրանան, ու մենք ի վերջո կհասնենք համահայկական մեծ ցանցի գաղափարի շոշափելի արդյունքի:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

2019-Ը՝ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԵՎ ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՏԱՐԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀՈԴՎԱԾԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ԻՐ ՎՐԱՑ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԼԵՎԱՆ ՂԻՓԻԱՆՈՒՆ

Հայ եւ վրաց ժողովուրդների գրական կապերն առավել զարգացում են ապրել 19-րդ դարի երկրորդ կեսին եւ 20-րդ դարի սկզբներին: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ Թիֆլիսը վերածվել էր հայկական հոգեւոր-մշակութային կենտրոնի:

Գրական-մշակութային հարաբերությունների զարգացման առումով, պակաս կարեւոր չէր հայ եւ վրաց գրողների՝ Խ.Աբովյանի, Հովհ.Թումանյանի, Ավ.Իսահակյանի, Վ.Տերյան, Ե.Չարենցի, Դ.Դեմիրճյանի, Ի.Գրիշաշվիլու, Տ.Տաբիձեի, Կ.Գամսախուրդիայի, Գ.Տաբիձեի, Գ.Լեոնիձեի, եւ ուրիշների մտերմությունն ու ստեղծագործական սերտ փոխգործակցությունը:

Ժամանակին հայ-վրացական փոխհարաբերությունների հոգեւոր միասնության «լուսավոր բարձունքը», իհարկե, եղել եւ մնում է Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը:

«Կա Մեծարենց, կա Տերյան, եւ բազում ուրիշ պոետներ կան, Բայց Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության»,- այսպես է բնութագրել նրան մեր մյուս բանաստեղծ-հսկան՝ Ե.Չարենցը:

Թումանյանի ստեղծագործությունների մեջ՝ բանաստեղծություններ, պոեմներ, բալլադներ, քառյակներ, պատմվածքներ եւ այլն, իրենց առանձնակի տեղն ու դերն ունեն մեծ բանաստեղծի հոդվածները, որոնք նա գրում էր բազմաթիվ առիթներով ու ելույթներով հանդես գալիս տարբեր գրական երեկույթների ժամանակ:

Գրեթե չորս տասնամյակ բանաստեղծի ստեղծագործական-հասարակական կյանքն անցել է Թիֆլիսում: Խորն ու ամուր է Հովհ.Թումանյանի կապը վրաց ժողովրդի հետ եւ անչափ մեծ՝ նրա սերը վրացիների հանդեպ: Վրաստանը Թումանյանի երկրորդ հայրենիքը դարձավ, որին նա նվիրվեց իր սիրատոչոր սրտի ամբողջ ուժով, կապվեց իր ողջ էությամբ ու անկեղծությամբ:

«Վրացու անմիջական եւ սրտաբաց բնավորությունը, նրա սրտի ազնվությունը, բնական մաքրությունն ու անարատությունը, ազատության եւ գեղեցկության սերը, այս բոլորը ամեն կողմից լուսավորված կյանքի սիրով ու նուրբ վշտով, առհավատչյան են այն բանի, որ վրաց բանաստեղծությանն սպասվում է մեծ ապագա:

Այս հատկությունները զարմանալիորեն երեւան են եկել Շոթա Ռուսթավելու մեջ, եւ նա իր ամբողջ էությամբ վրացի բանաստեղծ է»,- գրում է Թումանյանը իր «Վրաց բանաստեղծությունը» հոդվածում եւ ապա շարունակում. «Այս ոգին ամբողջ էությամբ երեւաց վրաց ժողովրդի սրբի՝ Սուրբ Նունեի խաչի մեջ, որ շրջապտված է խաղողի որթով եւ աղջկա մազերով: Սրանով նա ներդաշնակորեն միացնում է երկնային վեհությունը եւ կյանքի ուրախությունը:

Բանաստեղծական բնավորությունն այնքան է հատկանշական վրացուն, որ ամեն վրացի ինձ թվում է բանաստեղծ»: (Հոդվածը տպագրվել է վրաց գրական ընկերության հրատարակած «Պոեզիայի օր» թերթիկում, 1920թ. մայիսի 7-ին, վրացերեն):

Այսպիսի հոդվածների մենք շատ կհանդիպենք Մեծն բանաստեղծի երկերի տարբեր հատորներում ու նրա տուն-թանգարանի արխիվում:

Այսօր մեր թերթի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում մեծ գրողի «Իմ պատասխանը Լեւան Ղիփիանուն» հոդվածը, որը նա գրել է 1919թ.: (Հոդվածի ռուսերեն թարգմանությունը տպագրվել է «Կավկազսկոյե սլովո» 1919, ապրիլի 10, N 66: Թումանյանի արխիվում պահպանված է այս հոդվածի հայերեն ինքնագիրը):

«Իմ թանկագին ընկեր, իմ հոգու ընկեր Լեւան Դավիդովիչ: Ձեր հրապարակական նամակներում դուք ինձ առաջարկներ եք անում ու հարցեր եք տալիս, եւ ինձ ինչքան հետաքրքրում ու զբաղեցնում են ձեր արած առաջարկներն ու հարցերը՝ եւս առավել զմայլեցնում են էն պարզ, անկեղծ ու բարի սիրտը, որ երեւում է ձեր տողերում, էն ազնիվ, բանաստեղծական հոգին, որով համակված են ձեր հոդվածները: Լավ վրացու, իսկական վրացու սիրտն ու հոգին:

Եվ էդ տեսակ մարդը դեռ հարց է տալիս, թե ի՞նչ պետք է անենք, որ մոտենանք իրար: Ես ձեզ կասեմ. էդ տեսակ սիրտ պիտի ունենանք:

Եվ տեսնո՞ւմ եք, որ ունենք: Եվ դեռ էդպես շատ սրտերի տեղ գիտեմ ես: Բայց, իհարկե, դուք ձեր սիրտը չեք տեսնում եւ ոչ էլ հաշվի եք առնում, ինչպես եւ ձեզ նմանները. ճիշտ էնպես, ինչպես երեխաները տեղեկություն չունեն իրենց անմեղության մասին եւ առանձին նշանակություն էլ չեն տալիս:

Դուք էլ երկյուղով եք նայում էն անդունդին, որ փորել են մեր ժողովուրդների մեջ մեր կառավարող շրջանները: Սակայն, չէ՞ որ ժամանակն աշխարհքին նոր լոզունգ է տվել՝ էդ տեսակ դեպքերում երես դարձնել կառավարող շրջաններից եւ նայել հասարակ ժողովրդին, ամեն մի ազգի ընդհանրությանը, եւ իսկույն ձեր երկյուղը կանցնի:

Դուք հատկապես խոսում եք հայ եւ վրացի ժողովուրդների մասին: Նայեցեք հասարակ ժողովրդին: Ես ձեզ մի կոնկրետ օրինակ բերեմ նորանցյալ հայ-վրացական դժբախտ ընդհարումից»,- գրում է Թումանյանը եւ ապա վերոնշյալ հոդվածում պատմում ականատեսներից լսած մի դեպք:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)